ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՏՈՄԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ»

փակ բաժնետիրական ընկերություն

Հայաստանի Հանրապետություն, Արմավիրի մարզ, 0910, ք. Մեծամոր, հեռ./ֆաքս - (37410) 28 06 69, (37410) 28 85 80, կապի օպերատոր - (37410) 73 98 30, էլ.փոստ - anpp@anpp.am, anpp@haek.am

№ E/13/1843-22 առ. "16" 08 2022թ.

Ձեր №_____ առ. "___" _____ 2022թ.

«Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի տնօրեն
պրն Ռ.Աղաբեկյանին
E-mail: energygroup.am@gmail.com

[Ծանուցում №ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/045 պայմանագրի միակողմանի լուծման վերաբերյալ]

Հարգելի՛ պարոն Աղաբեկյան,

«Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կարիքների համար զոդման, եռակցման նյութերի և սարքավորումների (այսուհետ՝ ապրանք) ձեռքբերման նպատակով ս/թ փետրվարի 16-ին հրապարակված «ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում, 12,13 և 14-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքների մատակարարման նպատակով «ՀԱԷԿ» ՓԲԸ-ի և «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի միջև 2022թ. մարտի 30-ին կնքվել է թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/045 պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր)՝ 3075600 (երեք միլիոն յոթանասունհինգ հազար վեց հարյուր) ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ) ընդհանուր գնով: Պայմանագրով մատակարարվող 12-րդ չափաբաժնով սահմանված 1270 կգ էլեկտրոդը, որի ընդհանուր գինը կազմում է 2016000 (երկու միլիոն տասնվեց հազար) ՀՀ դրամ «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի կողմից չի մատակարարվել:

Համաձայն վերոհիշյալ Պայմանագրի

- 2.4.1 կետի <<Վաճառողը պարտավոր է Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով>>:
- 2.4.2 կետի <<Վաճառողը պարտավոր է ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում>>,
- 2.4.4 կետի <<Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով>>:
- Հավելված N1-ի Վաճառողը պարտավոր է մատակարարումը իրականացնել Պայմանագրի կնքման օրվանից 30 օրացուցային օրում:

Հիմք ընդունելով հիշյալ պայմանագրի 2.1կետը այն է, գնորդը իրավունք ունի՝

- 2.1.1 ապրանքը սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի;
- 2.1.7 միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե էականորեն խախտվել է պայմանագիրը;
- 2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտվել էական է համարվում, եթե՝

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրացուցային օրից ավելի:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ «ՀԱԷԿ» ՓԲԸ-ն միակողմանի լուծում է «Էներջի Գրուպ» ՍՊԸ-ի հետ 2022թ. մարտի 30-ին կնքած թիվ ՀԱԷԿ-ԷԱՃԱՊՁԲ-36/22-01/045 պայմանագիրը 12-րդ չափաբաժինի մասով:

Հայտնում ենք նաև, որ չմատակարարված ապրանքների մասով Ձեր կազմակերպության նկատմամբ կկիրառվեն նաև պայմանագրի 6-րդ կետով սահմանված տույժը և տուգանքը:

Գլխավոր տնօրենի տեղակալ-
ընդհանուր հարցերի գծով տնօրեն՝ **Ս.Մաթևոսյան**

Կազմեց՝ Վ. Մանուկյան
ԳԲ 2-րդ կարգի մասնագետ
+374 10 28 29 60